Դրամաշնորհային աջակցություն «Մարդկային անվտանգության ծրագրերի» համար ՖՏ 2022.

«Արմավիրի քաղաքապետարանի թիվ 5 մանկապարտեզի հիմնանորոգման» դրամաշնորհային ծրագրի ստորագրման արարողություն

2023 թ. հունվարի 25-ին ՀՀ Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունում տեղի ունեցավ «Արմավիրի քաղաքապետարանի թիվ 5 մանկապարտեզի հիմնանորոգման» 147,210 ԱՄՆ դոլար արժողությամբ դրամաշնորհային պայմանագրի ստորագրման արարողությունը՝ Ճապոնիայի կառավարության Մարդկային անվտանգության «Grassroots» ծրագրերի համար դրամաշնորհային աջակցության շրջանակում: Պայմանագիրը ստորագրվեց ՀՀ-ում Ճապոնիայի դեսպան պարոն Մասանորի Ֆուկուշիմայի և Արմավիրի զարգացման կենտրոնի նախագահ տիկին Նաիրա Առաքելյանի միջև: Արարողությանը ներկա էին ԿԳՄՍ նախարարի տեղակալ պարոն Արթուր Մարտիրոսյանը, Արմավիրի թիվ 5 մանկապարտեզի տնօրեն տիկին Լիլիթ Գրիգորյանը:

Ծրագրի նպատակն է բարելավել Արմավիրի համայնքի թիվ 5 մանկապարտեզը և նպաստել քաղաքի կրթության որակի և կենսամակարդակի բարձրացմանը՝ վերանորոգելով շենքը և տեղադրելով ջեռուցման համակարգ: Արդյունքում մոտ 190 երեխա կշահի ծրագրից:

Դեսպան Ֆուկուշիմայի ելույթը

Դրամաշնորհային պայմանագրի ստորագրումը դեսպան Ֆուկուշիմայի և տիկին Առաքելյանի միջև

Ձեռքսեղմում ստորագրումից հետո

(ձախից) Դեսպան Ֆուկուշիման, տիկին Առաքելյանը, տիկին Գրիգորյանը և նախարարի տեղակալ պարոն Մարտիրոսյանը